ԹՂԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՌԵՐԻ ԳԻՏՍԻ ԵՒ ՏՊԱՐՈՒԹԵԱՆ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Կարդալ ա՛ն, 5 մարտի

Փետրուարի 3-ին, տեղիս ծխական զարգացի ուսուցչական և հոգաբարձական խառն ժողովի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն, որին մասնակցեցին հրաւիրուած էին հասարակութեան բոլոր խաւերից։

Խառն ժողովի կողմից զարգացի աւ. ուս. պ. Մ. Եղիկեան ընդգծելով տաւերի գիւտի նշանակութիւնը և տպագրութեան դերը հայ կեանքում աւելացրեց, որ տեղիս հայ հասարակութիւնն էլ անտարբեր չպիտի մնայ դէպի այդ նշանաւոր յօրելեանը և պիտի աշխատի օրէնքաւորապէս զործով յաւերժացնել այն։ Ապա յայտնեց, որ զարգացի վարչութիւնը իր խառն ժողովում խորհրդակցութեան նիւթ դարձնելով այդ խնդիրը, ամենայարմար ժամանակը յօրելեանի կատարման ընտրել է Վարդանանց տօնի օրը, երբ հասարակութեան մեծ բազմութիւն հաւաքած կլինի զարգացի սրահ կը խնայի նաև տաւերի ու տպագրութեան գիւտերի մասին ու նրանց նշանակութիւնը կը բացատրի հասարակութեան։

Ժողովը ցանկութիւն յայտնեց անպատճառ տօնելու յօրելեանը և նպատակայարմար գտաւ յօրելեանը Վարդանանց տօնին կատարելու առաջարկութիւնը. իսկ տօնը յաւերժացնելու մի-ջոցների մասին ժամանել հասարակութեան աւելի լայն խաւերի մասնակցութիւնը զրաւելու համար՝ որոշեց երկու օրից յետոյ երկրորդ ժողովը զումարել և այն ժամանակ որոշել այդ հարցը։ Բայց ցաւօր սրտի պիտի խոստովանեմ, որ ամսի 5-ին հրաւիրած ժողովը առաջինից աւելի բազմամարդ չեղաւ. ի սկսան ունենալով ժամանակի սղութիւնը և այն, որ յետագիտալու զէպքում էլ բազմամարդ ժողով ունենալու ոչ մի երաշխաւորութիւն չկայ, որոշեց բաւականանալ ներկայ եղող ժողովականների թիւով և անցնել խնդրին։

Տօնը որեւէ ձեռնարկութեամբ յաւերժացնելու համար եղան զանազան առաջարկութիւններ, որոնց իրագործումը զրամական աւելի մեծ զոհաբերութիւնների հետ կապած լինելով կարող էին ապարդիւն մնալ. ուստի առաջարկեցաւ կանգ առնել այնպիսի առաջարկութիւնների վրայ, որոնք իրագործելի են. այդ տեսակէտով որոշուեց 1) հիմնել տեղումս Կոմկիսի Հայոց Հրատարակ. Ընկ. ճիւղ՝ ընթերցանութեան զրքեր տարածելու և կազմակերպել դասախօսութիւններով ու ժողովրդական ընթերցութիւններով նրա լուսաւորութեան ու զարգացման զործին զարկ տալու. և 2) սկսել նախաբերութիւն հասարակութեան մէջ և գոյացած զումարի մի մասը յատկացնել զարգացական փոնդին, իսկ միւս մասով բերել տալ անհրաժեշտ ուսումնական պիտոյքներ, պատկերներ ու ֆիզիքական զործիքներ, որոնցից մինչև այժմ զուրկ է զպրոցը. զործը դլուխ բերելու համար ընտրուեց 10 հոգուց, տիկիններից և պարոններից բաղկացած մի մասնախումբ. իսկ հանդէսի կազմակերպութիւնն ու ծրագրի մշակումը յանձն առաւ ուսուցչական խումբը։

Վարդանանց տօնի օրը՝ փետրուարի 21-ին զպրոցում հանդէս կար, Թոմաեանների Տան 300-ամեակի առթիւ, ուստի Վարդանանց տօնը և ծրագրած յօրելեանական հանդէսը կատարուեցան փետրուարի 24 ին, բուն բարեկենդանի օրը։

Պատարագից յետոյ հասարակութեան խուռն բազմութիւնը լցրեց զպրոցի դահլիճը, ինչպէս ասում են՝ ասող զցելու տեղ չկար. շատերը կանգնած էին միջանցքում, դահլիճը շրջապատած էր զոնաւոր թզղթից շինած շրջանակով և առաստաղից դէպի պատերը գնացող զոյնզոյն եռանկիւնաձև դրօշակներով, դահլիճի դիմացը բեմի աջ և ձախ կողմերում զոյգ դրօշակաւոր ցուցանակների վրայ գրած էին Մահակի և Մեսրոպի անունները, տակից կախած նրանց լուսանկար պատկերները, իսկ կողքի պատերին նոյնպիսի ցուցանակների վրայ՝ Թարգմանիչների և V դարի մատենագիրների անունները. աւելի բարձր՝ դահլիճի դիմացի անկիւնները մէկում ուրբաաեան սեպաձև արձանագրութեան մեծագիր տառերով ԳԸՐ-ւած Թարգմանած նախադասութիւնը «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ և իմանալ զբանս հանճարոյց». մանաւանդ իր գեղեցկութեամբ ու խորհրդաւորութեամբ աչքի էին ընկնում լուսամուտներից կախած վենդիներից 2-ը, որոնց կանաչագոյն պատկերից մէկի մէջ գրած էին լուսաւորութեան, իսկ միւսի մէջ աշխատանքի էմբլեմները, տակները պատշաճաւոր ոտանաւորի մի մի տուն փորագրած։ Դահլիճի չորրորդ պատից կախած էր «Հայկական զրոշմը», մեծագիր նկարած բարձանի վրայ. իսկ բեմի առաջ, առաստաղից կախած «Գուտենբերգի մեծագոյր նկարը։

Հանդէս բացուեց բառաձայն խմբի «Մեր հայրենիք» երգով, այնուհետև զպրոցի աւագ ուս. պ. Մ. Եղիկեան իր մի ժամից աւել տեւող բանախօսութեամբ պատմական հայեացք զցեց հայերի ու Հայաստանի վիճակի մասին մինչև քրիստոնէութեան մուտքը, ապա նրա առաջացրած յեղաշրջումը մտաւոր և քաղաքական կեանքում. տաւերի գիւտը, Մահակ-Մեսրոպեան զպրոցների կատարած դերը V-րդ դարու շարժումների ժամանակ և յետագայում Տ իբրև եղբակցութիւն յարգրերց հասարակութեանը նիւթական կողմից անմասնանձիի զպրոցը իր հոգացողութեան զլխաւոր առարկայ դարձնել ու նրա ապահովութեան մասին միջոցներ ձեռք առնել։ Բանախօսութիւնից յետոյ խումբ երգեց ս. Մեսրոպին նւիրած ձօնը. ապա զպրոցի աշակերտները մէջ մէջ զեղեցիկ ասոգանութեամբ պատասանեցին Վարդանանց յիշատակին ու օրուայ հանդիսին համար շատ յաջող ընտրած ոտանաւորներ։

Հանդիսի II մասում կրօնաւորց քահանան կարդաց տպագրութեան սկզբնաւորութեան և զարգացման մասին։ Վերջում ցոյց տուեց Մահակ-Մեսրոպի կենդանի պատկերը բենգալեան լուսաւորութեամբ, որ մեծ ազդեցութիւն թողեց հանդիսականների վրայ։ Հանդէսը վերջացաւ մօտ 3½-ին։ Հասարակութիւնը շատ գոհ սրտով ու հաճելի տպաւորութեամբ ցրուեցաւ։

Հանդիսական